ԱՌԱՋԱՐԿ / ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏԻ/ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կազմակերպության անվանումը՝	«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ
Հասցեն՝	Երևան, Ամիրյան 11/24
Էլեկտրոնային փոստը՝	info@prwb.am
Հեռախոսահամարը՝	098505303; 010505303
Պետական մարմնի անվանումը՝	ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Ներկայացման ամսաթիվը՝	17.04.2023թ.

1. Շահառուների որ խմբի շահերն է ներկայացնում դիտողության/առաջարկի հեղինակ կազմակերպությունը՝
Դիտողություն ներկայացնող կազմակերպությունը իրավապաշտպան կազմակերպություն է, որը զբաղվում է մարդու իրավունքների խախտումների տուժողներին իրավական աջակցություն տրամադրելով, այդ թվում՝ դատարանում:
2. Ներկայացվածը հանդիսանում է արդյոք այլ ՔՀԿ-ների կամ կազմակերպությունների հետ համատեղ մշակված դիտողություն/առաջարկ: Եթե այո, ապա նշել այն կազմակերպությունները, որոնք մասնակցել են դրա մշակմանը:
Ոչ
3. Դիտողության/առաջարկի վերաբերյալ իրականացվել են արդյոք խորհրդակցություններ հիմնական շահառուների հետ՝
Դիտողությունների հիմքում ընկած է Կազմակերպության կողմից իրականացված հետազոտության արդյունքները (հասանելի https://prwb.am/2022/02/10/zekuyc-5/**), ինչպես նաև դատարանների գործեության և դատահիրավական բարեփոխումների իրականացման մշտադիտարկման արդյունքները: Հետազոտության շրջանակներում հարցազրույցներ են իրականացվել նաև դատական համակարգի ներկայացուցիչների հետ:**
4. Կազմակերպությունը ենթադրում է արդյոք իր մասնակցությունը առաջարկվող ծրագրի/միջոցառման ֆինանսավորման, իրականացման կամ մոնիտորինգի գործընթացներում: Եթե այո, ապա նշել ենթադրվող մասնակցության ձևը *(լրացվում է միայն նոր նախաձեռնություն հանդիսացող առաջարկի դեպքում):*
5. Նշել այն ոլորտը, բյուջետային ծրագիրը և միջոցառումը, որին առնչվում է դիտողությունը/առաջարկությունը *(նոր նախաձեռնություն հանդիսացող առաջարկի դեպքում ծրագրի կամ միջոցառման դասիչները կարող են չլրացվել)*՝

Ոլորտը՝	Դատաիրավական
Ծրագրի դասիչը և անվանումը՝	1080 «Դատական իշխանության գործունեության ապահովում և իրականացում»
Միջոցառման դասիչը և անվանումը՝	

6. Նշել ներկայացված դիտողության/ առաջարկի բնույթը՝

Դիտողություն [X] Առաջարկություն [X] Նոր նախաձեռնություն [ ]

7. Նշել, թե ինչ հարցերի է անդրադառնում ներկայացված դիտողությունը/ առաջարկությունը *(կարելի է միաժամանակ նշել մի քանի տարբերակներ)*՝

Նպատակներ	[ ]	Ծառայության որակ	[ ]
Գերակայություններ	[ ]	Ծառայության մատչելիություն	[ ]
Շահառուների շրջանակ	[ ]	Ֆինանսական հաշվարկներ	[X]
Սպառվող ռեսուրսներ	[X]	Արդյունքային ցուցանիշներ	[X]
Իրականացման եղանակներ	[ ]	Վերջնական արդյունքներ	[X]
Նոր ծառայություններ	[ ]	Նոր տրանսֆորտներ	[ ]
Նոր կապիտալ ներդրումներ	[ ]	Արդյունավետություն	[X]

Այլ՝ _____

8. Ներկայացնել դիտողության/ առաջարկի բովանդակությունը *(100 բառի շրջանակներում)*՝

1. **Բյուջեի նախապատրաստման փուլում չեն ապահովվում պատշաճ խորհրդակցություններ դատական և գործադիր իշխանությունների միջև, որի արդյունքում բյուջետային հայտի պատրաստումից հետո Կառավարությունը հանդես է գալիս որոշակի նախաձեռնություններով, որոնք էականորեն ազդում են դատական համակարգի ֆինանսավորման վրա: Մասնավորապես, առաջին ատյանի դատավորների վարձատրության ավելացումը** 60% **հավելում նախատեսելու միջոցով շրջանառության մեջ է դրվել ԲԴԽ կողմից բյուջետային հայտը կազմելուց հետո: Նման պրակտիկան Կազմակերպության կողմից արձանագրվել է ամեն տարի** 2020 **թվականից ի վեր: Անհրաժեշտ է հստակեցնել և համակարգել դատական ֆինանսավորման վրա ազդող նախաձեռնությունները և համապատասխանեցնել բյուջեի պլանավորման ցիկլին:**
2. **Հայտը նախատեսում է դատավորների թվի հնարավոր ավելացում և դրա համար անհրաժեշտ ֆինանսավորում: Միևնույն ժամանակ նշված թվի ավելացման մասին Կառավարության որոշում առկա չէ:**
3. **Ծրագրի արդյունավետության չափման ցուցիչները թույլ չեն տալիս գնահատել ծրագրի արդյունավետությունը: Մասնավորապես, Ծրագրի գծով** 2024-2026**թթ. համար սահմանվել են հետևյալ թիրախային ցուցանիշներ՝ Ըստ** WEF-**ի ցուցանիշի՝ դատական համակարգի անկախությունը իշխանության այլ ճյուղերի, անհատների կամ ընկերությունների ազդեցությունից** 6,3 **ցուցանիշը /ելակետային** 3,3-**ից/: Չի բացատրվում, թե ինչու է ընտրվել հենց այդ ցուցանիշը, որ գործոններն են համարվել խնդրահարույց և ինչպես պետք է**

խնդիրների հաղթահարման վրա աշխատել, որպեսզի ապահովվի թիրախային ցուցանիշը: Հավելված 12-ում նշված «Արդյունքի չափորոշիչները», ելակետային ու թիրախային ցուցանիշ չսահմանելով, թույլ չեն տալիս գնահատել աշխատանքի արդյունավետությունը: Սա հատկապես վերաբերում է գենդերային ցուցանիշներին որպես արդյունքի ցուցանիշ: Վերլուծությունը ցույց է տալիս, որ որևէ լրացուցիչ քայլեր չեն ձեռնարկվում գենդերային հավասարությունը խթանելու ուղղությամբ, այլ պարզապես արտացոլվում է վիճակագրությունը, ուստի դա չի կարող ծառայել որպես արդյունքի չափորոշիչ: Դատարանի՝ ի դեմս դատավորի, աշխատանքի արդյունավետությունը գնահատելու համար կարող է ծառայել ստացված/քննված/ավարտված գործերի քանակը և դրանց համար պահանջված ժամանակահատվածը: Օրինակ, եթե որպես ելակետային տվյալ նշվում է դատավորի վարույթում գտնվող գործերի թիվ, իսկ որպես թիրախային տվյալ՝ ավելի նվազ թիվ, այդ դեպքում որպես միջոց դիտարկվում է դատավորների թվի ավելացում, որոշ վեճերի դեպքում այլընտրանքային վեճերի լուծման մեխանիզմների ներդրում/ավելի արդյունավետ կիրառում, և տարեցտարի դատավորի ծանրաբեռնվածության /գործերի թվի/ ցուցանիշը թույլ կտա գնահատել, թե արդյոք կիրառված միջոցառումները թույլ են տվել հասնել նպատակին, թե ոչ: Հավելված 12-ի 5-րդ բաժնում նշված ցուցիչների ընտրությունը հիմնավորված չէ՝ թիրախային նպատակին ու ցուցանիշին հասնելու տեսանկյունից: Օրինակ՝ պարզ չէ, թե ինչպես ԲԴԽ կողմից 35 օրենսդրական նախաձեռնությունը կնպաստի WEF ցուցանիշի բարձրացմանը: Արդյո՞ք պարզ են այն ոլորտները, ըստ 2018թ. գնահատման 3,3 ցուցիչի, որոնց վերաբերյալ անհրաժեշտ են օրենսդրական նախաձեռնություններ և այլն:

9. Ինչ օգուտներ են ակնկալվում առաջարկի իրականացման արդյունքում: Ինչպես է առաջարկի իրականացումն ազդելու թիրախային շահառուների, այդ թվում՝ մատուցվող ծառայությունների որակի վրա՝

Ավելի պատշաճ պլանավորում, որի արդյունքում դատական համակարգի բարեփոխումները կլինեն ավելի արդյունավետ և կանխատեսելի, և ֆինանսավորման միջոցով անկախության ապահովումը կամրապնդվի:

10. Ինչ ժամանակահատվածում է նախատեսվում իրականացնել առաջարկը՝

Մինչև Ազգային ժողովի գլխադասային հանձնաժողովում քննարկումների անցկացումը

11. Ընդհանուր գնահատականներով ինչ ռեսուրսներ (սարքավորումներ, աշխատաժամանակ, ֆինանսական միջոցներ և այլն) կպահանջվեն առաջարկի իրականացման համար՝

#	Նկարագրություն	Գումար (ՀՀ դրամ)
1	Ներքին ռեսուրսներով	
2		
…		
	Ընդամենը՝	

12. Առաջարկը ենթադրում է արդյոք պետական բյուջեից բացի ֆինանսավորման այլ աղբյուրների ներգրավում: Եթե այո, ապա ներկայացնել առաջարկի համաֆինանսավորման աղբյուրները, ուղղությունները և նախնական ֆինանսական գնահատականները:

Ոչ